ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15 մարտի 2019թ. թիվ 91

ԿԻՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2018թ. դեկտեմբերի 4-5-ը կատարած ուսումնասիրության արդյունքները և հաշվի առնելով Կ.Պետրոսյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմիկ Պետրոսյանի նկատմամբ կիրառել « նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կ. Պետրոսյանին՝

10-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մարտի 15
ք.Վանաձոր